ինչ 'ի տեղեաց նոցին. և 'ի ծանուցանելն զայս Դեսպանին Գաղղիոյ, հրաման եղեւ դարձուցանել 'ի վիճակն առաջին։ Եւ Օսմանեան Պետութիւնն գոլով բարեկամ Գաղղիոյ, եղեւ հրաման՝ զի Լատին կղերք և ամենայն հետեւողք նոցին՝ յորմէ ազգէ և իցեն՝ անարգել կատարեսցեն զուխտս իւրեանց, և խաղաղութեամբ բնակեսցին 'ի ներքս Երուսաղէմի և արտաքոյ նորին, և յատկացեալ տեղիքն ըստ առաջնոյն մնասցեն 'ի ձեռս նոցա. և ըստ հրովարտակացն ١٠٨٤ • ١١٥٣, եւ դաշնագրոյն չլինիլ ուժեք հարկապահանջ. և 'ի պատճառս չինութեան և այլ առթիւ չհակառակիլ ուխտին և յատկացեալ բնակութեանց և տեղեաց նոցին, ըստ զօրութեան դաշնագրոյն և այլ հրովարտակաց, եթէ նորոգեալ իցեն, դարձցին 'ի վիճակն առաջին, որոյ վասն տուեալէ հրովարտակ ١٢٢٥ 'ի \ Շապան ամսոյ, դարձեալ և 'ի նոյն թիւ 'ի \ Զիլհիճէ ամսոյ։

Եւ վասն չգործադրելոյ զնոսա՝ դարձեալ հրովարտակ ١٢٢٧ 'ի հաստատութիւն նոցին, այսոքիկ արձանագրեալ կան վասն ուխտին և բնակութեան Լատինաց։ Եւ յԵրուսաղէմէ ծանուցանեն թէ՝ Համբարձման գմբեթն, Սուրբ Յարութիւն և արտաքոյ նորին ուխտատեղի և բնակարանք նոցին. սակայն անուանք նոցա բացայայտ ոչ են գրեալ 'ի դիւանին. և Հէօճէթն Երուսաղէմի չդտաւ համաձայն դաշնագրոյն, որոյ վասն անտես եղեւ։ Եւ դրեցաւ վերստին հրովարտակ 'ի հաստատութիւն առաջնոց, զի 'ի պատճառս նորոգութեան Հայք և Յոյնք մի հակառակեսցին ուխտին Լատինաց »։ Առեալ էին Լատինք եւ զիր հրամանի 'ի Փոխարքայէն Եգիպտոսի համաձայն մըտաց հրովարտակին։ Հայք ոչ երբէք ցուցին ընդդիմութիւն պատարագին Լատինաց, զոր 'ի տարւոջ միանգամ կատարէին 'ի ներքոյ գմբեթին. սակայն ոչ չատացեալ այնու, խնդրէին բառնալ խսլառ 'ի տեղւոջէ անտի ըստ եղանն, զկանթեղս և զպատկերս և զայլ ամենայն զարդս, կործանել և անհետ առնել զբովանդակ չինուածս Հայոց, արտաքսել զնոսա անտի և թողուլ զտեղին 'ի վիճակն առաջին աւերակ, և զբանալին տալ 'ի ձեռս այլազգի Իսմէթ տեղւոյն։ Թէպէտեւ խնդիրք նոցին հակառակ էր Կայսերական հրամանին, այլ որսացեալ էին 'ի կողմն իւրեանց